# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/6 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ծառայողական շների համար անհրաժեշտ չոր կերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 31.10.2023թ. N 398/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 17.11.2023թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Կ.Բալայանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Մխիթարյանը, Ն.Գալուստյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

**<u>Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին</u>**

-Գնահատող հանձնաժողովի նախագահ Կ.Բալայանը տեղեկացրեց, որ գնահատող հանձնաժողովը համաձայն ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/6 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետի մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հանձնաժողովի նիստը և համակարգի միջոցով ծանուցել էր «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունները:

-«ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է հայտում տեղ գտած անհամապատասխանությունները և համակարգի միջոցով ներկայացրել է շտկված տարբերակը (կցվում է):

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
2. Հաշվի առնելով, որ «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պլանավորված ընդհանուր գինը՝ «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
3" ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/6 ծածկագրով (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդը "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարել անգործության ժամկետ, հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Կ.Բալայան

Անդամներ՝ Ա.Մխիթարյան

Ն.Գալուստյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան